

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 81

DOI: 10.56246/18294480-2024.17-37

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող
ելփոստ՝ artva@list.ru

Լեզվի զարգացմանը, նոր բառերի և եզրույթների ի հայտ գալուն զուգահեռ, արդի հայերենում ժամանակ առ ժամանակ երևան են գալիս նաև սխալ ձևեր: Բառագործածության նման սխալներից զերծ չէ նաև պաշտոնական հայերենը: Երբեմն աղավաղվում, սխալ կիրառություն են գտնում տնտեսագիտական, դիվանագիտական, իրավաբանական և այլ եզրույթներ:

Սույն հոդվածում ուսումնասիրության համաժամանակյա մեթոդով վերհանվում են բառագործածության նմանօրինակ սխալները և կանոնարկվում պաշտոնական հայերենի մի շարք եզրույթներ, որոնց թվում՝ «գազաթնաժողով», «տնտեսավարող սուբյեկտ» և այլ հասկացություններ, հստակեցվում են Հայաստանի Հանրապետության մարզերի անվանումների, երկրանունների ճիշտ տառադարձման և կիրառման հարցեր:

Մասնավորապես կանոնարկվում են աշխարհագրական անունները, որոնց ճշգրիտ ձևերի հիմքում հաշվի են առնվում ոչ միայն արդի հայերենի կանոնները, այլև պատմական ավանդույթները, հատուկ անունների տառադարձման ավանդական սկզբունքները:

Հաշվի առնելով պաշտոնական հայերենի եզրույթների կանոնարկման կարևորությունը՝ լեզվաբանների ուշադրությունն է հրավիրվում կարևոր այս ոլորտի խնդիրների վրա, առաջարկվում է շարունակել հետևողական լինել մայրենիի հանդեպ պաշտոնական հայերենի ոլորտում, նորանոր անհրաժեշտ եզրույթներով հարստացնել պաշտոնական հայոց լեզուն, նպաստել ճշգրիտ, հանձնարարելի ձևերի արմատավորմանը, ինչպես նաև սխալ, աղավաղված ձևերի դուրսմղմանը՝ համագործակցելով համապատասխան մասնագետների՝ տնտեսագետների, քաղաքագետների, դիվանագետների, իրավաբանների և այլոց հետ:

Բանալի բառեր՝ արդի հայերեն, պաշտոնական հայերեն, եզրույթ, բառագործածություն, տեղանուն, երկրանուն, գազաթնաժողով, տնտեսավարող սուբյեկտ:

Ներածություն

Լեզվի զարգացմանը, նոր բառերի և եզրույթների ի հայտ գալուն զուգահեռ, արդի հայերենում ժամանակ առ ժամանակ երևան են գալիս նաև սխալ ձևեր, առանձին սխալների կողքին՝ նաև իմաստով կամ հնչողությամբ մոտ բառերի չարաբաստիկ զույգեր, որոնք, միմյանց փոխարեն սխալ գործածվելով, նպաստում են սխալի հետզհետե առավել խորանալուն և տարածվելուն¹:

Օրինակ՝ չնայած լեզվաբանների և մանկավարժների երկարամյա ջանքերին՝ դեռևս առկա է *հնագիտություն* և *հնէաբանություն* բառերի հայտնի շփոթը: Բոլոր բացատրական բառարանները հստակ բացատրում են, որ առաջինը *արխեոլոգիան* է՝ հին ժողովուրդների կենցաղի ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն², իսկ երկրորդը՝ *պալեոնյոլոգիան*՝ հնագույն ժամանակաշրջաններում գոյություն ունեցած և անհետացած կենդանիների ու բույսերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն³, այդուհանդերձ, սխալը շարունակում է գոյատևել:

Բառագործածության նման սխալներից զերծ չէ նաև պաշտոնական հայերենը: Երբեմն աղավաղվում, սխալ կիրառություն են գտնում տնտեսագիտական, դիվանագիտական, իրավաբանական որոշ եզրույթներ:

Սույն հոդվածում, լեզվի կանոնարկման նպատակով, վերհանվում են պաշտոնական հայերենում առկա բառագործածության նմանօրինակ սխալները, մատնանշվում ճիշտ ձևերը: Դրանում էլ կայանում է հոդվածի արդիականությունը:

Դիտարկումներ

Ողջունելի է, որ Հայաստանի անկախացումից ի վեր օտար լեզուներում առկա բազմաթիվ բառեր ու եզրույթներ ստանում են իրենց հայերեն զուգահեռները: Դրանցից է, օրինակ, *սամմիթ* («պետությունների ղեկավարների ժողով») քաղաքական եզրույթը, որ վերջին տասնամյակներում հայացվեց՝ մեր լեզուն հարստացավ ևս մեկ դիվանագիտական եզրույթով: Շատերին է, սակայն, տարակուսանքի մեջ գցում միմյանցից թեկուզև մեկ հնչյունով տարբերվող *գագաթնաժողով-գագաթաժողով* երկձևությունը:

Բանն այն է, որ հին հայերենի՝ բառավերջի *ն* ունեցող բառեր (*մայրն*, *ծեռն*, *ծուկն*, *մուկն*, *գագաթն*, *ասեղն*, *եալթն*, *դասն* և այլն) պարունակող համադրական բարդությունները գրաբարում գրեթե անխտիր կազմվել են *ն*-ի պահպանմամբ՝ *աղեղնաւոր*, *մայրնացոյց*, *դասնապարիկ*, *եալթնաղի*, *առադաձեռն*, *բոկոյոն* և այլն:

Ժամանակակից գրական հայերենում նույնպես այդ կանոնը գործում է, մանավանդ բարդությունների առաջին եզրում՝ *ծկնկիթ*, *մկնդեղ*, *ուսումնասեր*, *կողմ-*

¹ Հ. Զաքարյան, Յ. Ավետիսյան, *Բառագիտություն*, Ե., 2016, էջ 69-80: Հ. Գալստյան, *Ճիշտը և սխալը*, Ե., 2019, էջ 5-85:

² Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1976, էջ 878:

³ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 881:

նացույց, կաթնատուր, հարսնաքույր, բեռնատար, ասեղնաբուծություն, ձեռնագնդակ և այլն: Կանոնը սակավաթիվ որոշ բացառություններում խախտվում է (ոտաբորիկ, սերմացու, ձեռագործ և այլն), սակայն օրինաչափը ն-ի պահպանումն է¹:

Հետևաբար առավել հայեցի, առավել ավանդական կազմությունը *գազաթնաժողով*ն է, որին էլ անհրաժեշտ է նախապատվություն տալ: Ինչպես չենք ասի *գազաթակեր, գազաթամաս, գազաթասլաց, գազաթահայաց*, այլ համապատասխանաբար կասենք *գազաթնակեր, գազաթնամաս, գազաթնասլաց, գազաթնահայաց*, այնպես էլ պետք է ընտրենք *գազաթնաժողով*-ը, այլ ոչ թե *գազաթաժողով*-ը²:

Հաճախ հանդիպող բառօգտագործման նման մի սխալ էլ կապված է *տնտեսավարող սուբյեկտ* եզրույթի հետ:

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» *տնտեսավարել* բառի դիմաց մեկնում է. «Իբրև տնտես կառավարել, տնտեսական գործերը կառավարել», իսկ *տնտեսվար* բառի դիմաց նշում է. «Հապավում տնտեսության վարիչ բառերի»: Համանման բացատրություն է տալիս նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»:

Արդի պաշտոնական հայերենում, մասնավորապես՝ տնտեսագիտական, իրավաբանական տեքստերում, զուգահեռ օգտագործվում են և՛ *տնտեսավարող սուբյեկտ*, և՛ *տնտեսվարող սուբյեկտ* եզրույթները, ընդ որում՝ միևնույն իմաստով, միևնույն համատեքստում: Եվ այս եզրույթի հիշյալ տարբերակները համակիրառվում են նաև ՀՀ օրենքներում և այլ իրավական ակտերում, մասնավորապես՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում սահմանված է. «*Տնտեսվարող սուբյեկտ*՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցիչ... ֆիզիկական անձ»: *Տնտեսվարել*, փաստորեն, նշանակում է «տնտեսության վարիչ լինել», մասնավորապես՝ «դպրոցի կամ այլ հիմնարկի տնտեսվարը լինել», իսկ *տնտեսավարել*՝ «տնտեսական գործերը կառավարել»: Եվ քանի որ օրենսդրության մեջ խոսքը տնտեսություն վարող հիմնարկության կամ ֆիզիկական անձի մասին է, ուրեմն ճիշտը միանշանակ երկրորդ տարբերակն է: Ուստի իրավական ակտերի վերանայման պարագայում անհրաժեշտ է երկձևությունները փոխարինել միասնական եզրույթով՝ *տնտեսավարող սուբյեկտ* բառակապակցությամբ:

Ցավոք, երբեմն աղավաղվում են նաև մեր տեղանունները:

Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հյուսիսային գավառներից մեկը, որին համապատասխանում է «Աշխարհացույցի» Տուս գավառանունը, սկսած 9-րդ դարից, հիշատակվում է *Տավուշ (Տաուշ)* ձևով:

¹ Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու. հնչյութաբանություն, բառագիտություն, բառակազմություն*, Ե. 1999, էջ 250:

² Ա. Վարդանյան, *Գազաթաժողով, թե՞ գազաթնաժողով*, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.01.1997:

ՀՀ խորհրդարանի վարչատարածքային միավորների և բնակավայրերի վերանվանումների հանձնաժողովի շնորհակալ գործունեությամբ տարիներ առաջ մեր ժողովրդին վերադարձան ժամանակին հանիրավի փոփոխված և մեզանից ապօրինաբար խլված պատմական անունները: Օտար, անբարեհունչ, աղավաղված ձևերի փոխարեն կյանքի կոչվեցին հայեցի, բարեհունչ Աշոցքը, Տաշիրը, Վայքը, Կապանը, Արմավիրը... Սակայն, թե ինչպես Շամշադինի շրջանը իր պատմական Տավուշ անունը վերստանալու փոխարեն ստացավ կեղծ և պակասավոր Տաուշ ձևը, հանելուկ մնաց: Եվ առավել զարմանալին այն է, որ մամուլն ու հեռուստատեսությունը երկու տարի շարունակ նախանձելի եռանդով գործածում էին այդ սխալ ձևը:

Բանն այն է, որ այս տեղանունը միջնադարի մեր պատմիչների՝ Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի և այլոց աշխատանքներում, Հայկական հանրագիտարանում, «Հայ ժողովրդի պատմություն» կաճառային բազմահատորյակում և այլուր հիշատակվում է բացառապես *Տավուշ (Տաուշ)* ձևով: Ավելին, հին հայերենում *աու* երկբարբառ չի եղել, հետևաբար հնչյունների նման անբնական հերթագայությամբ կազմված հայերեն բառի, մասնավորապես բնիկ հայկական տեղանվան գոյությունն իսկ ոչ միայն խիստ կասկածելի էր, այլև, թերևս, անհնարին:

Եվ քանի դեռ չէր արմատավորվել խորթ, օտար Տաուշը, առանձին հոդվածներով անդրադարձանք խնդրին², սխալի ուղղման անհրաժեշտությանը, մանավանդ որ Տավուշ ձևը, վերոհիշյալ պատմական սկզբնաղբյուրներից զատ, միշտ էլ կիրառվել և մեր օրերում էլ կիրառվում է՝ *Տավուշի լեռնաշղթա*, *Տավուշ բերդ*, *Տավուշ գետ* և այլն: Սխալը վերջնականապես ճշտվեց 1995 թվականին՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, և «Տաուշի մարզը» դարձավ «Տավուշի մարզ»:

Մարզի անվան պաշտոնական ճշտումից տարիներ են անցել, սակայն սովորույթի ուժով շատերը Տավուշի *վ* հնչյունը լիարժեք չեն արտասանում, իսկ հաղորդավարներից շատերն ուղղակի ցուցադրաբար ընդգծում, ավելին՝ գովազդում են սխալ ձևը՝ արտասանության շեշտն էլ անհասկանալիորեն դնելով *ա* հնչյունի վրա:

Աղավաղման «բախտի» արժանացած հաջորդ մարզանունը *Գեղարքունիքն* է: *Գեղեցիկ* և *արքունի* արմատներից կազմված այս հիրավի գեղեցիկ և արքայական պատմական անունը երբեմն (կրկին մեր հաղորդավարների շուրթերին) արտասանվում է... *Գեղարքունիկ*: Ամենայն հավանականությամբ դա արվում է մարզանունը

¹ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 5, Ե., 1986, էջ 47-50:

² Ա. Վարդանյան, *Տաուշ, թե՞ Տավուշ*, «Երկիր» օրաթերթ, 20.05.1992: Ա. Վարդանյան, *Փոքրիկ, բայց անցանկալի մի սխալի պայմանություն*, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 06.04.1994:

բարեհունչ արտասանելու «բարի» մղմամբ, սակայն դժվար չէ նկատել, որ միանգամայն հակառակն է ստացվում:

Փոքրիկ մի թյուրիմացություն էլ Վայոց ձորի հետ է կապված: Հաճախ այդ տեղանվան երկու բաղադրիչն էլ գրվում է մեծատառով՝ Վայոց Ձոր, այնինչ տերմինաբանական կոմիտեի համապատասխան որոշմամբ աշխարհագրական այն բաղադրյալ հատուկ անունները, որոնցում լրացյալն առանձին վերցրած հատուկ անուն չէ, միայն առաջին բառն է գրվում մեծատառով¹:

Հաճախ հանդիպող մի անճշտություն էլ Լոռու մարզի անվան հետ է կապված: Մարզանվան սեռական հոլովածը կազմում է մի քանի՝ *Լոռու*, *Լոռվա*, *Լոռիի* ձևերով: Նախապատվելին, սակայն, *Լոռու* ձևն է. հիշենք թեկուզ մեծն Թումանյանի հայտնի պոեմների «Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց...», «Խոսում են Լոռու հին-հին քաջերից...» տողերը:

Աշխարհի շուրջ 240 պետություններն ունեն իրենց պաշտոնական ամբողջական և համառոտ անվանումները: Ամբողջական անվանումները սովորաբար կազմվում են երկրի անունից և տվյալ պետության կառավարման ձևը ցույց տվող բառից. օրինակ՝ Հունաստանի Հանրապետություն, Իսպանիայի Թագավորություն, Անդորրայի Իշխանություն, Օմանի Սուլթանություն, Իսրայելի Պետություն և այլն: Որոշ երկրներ էլ ընտրել են իրենց անվանման միայն համառոտ տարբերակը. օրինակ՝ Վրաստան, Կանադա, Ուկրաինա, Թուրքմենստան, Գրենադա, Ճապոնիա և այլն:

Երկրանունների հայերեն տառադարձման մեջ, որ հատկապես կարևոր է դարձել Հայաստանի անկախացումից ի վեր՝ արտաքին առավել լայն շփումների պայմաններում, նկատվում է ոչ միասնականություն. օրինակ՝ *Ֆրանսիայի Հանրապետություն* ձևի կողքին ոչ միայն մամուլում, այլև պաշտոնական փաստաթղթերում երբեմն կիրառվում է նաև *Ֆրանսիական Հանրապետություն* ձևը, *Արգենտինայի Հանրապետության* կողքին՝ *Արգենտինյան Հանրապետությունը*, *Իտալիայի Հանրապետության* կողքին՝ *Իտալական Հանրապետությունը* և այլն: Երբեմն սա բացատրվում է երկրի ինքնանվանմամբ (բնօրինակ լեզվում երկրի անվանմամբ), երբեմն էլ այլ լեզուներում (ռուսերենում, անգլերենում) տվյալ երկրանվան տառադարձմամբ:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այլ լեզուներում երկրանունները կազմվում են իրենց լեզվի ընձեռած հնարավորություններով և օրինաչափություններով, օրինակ՝ պարսկերեն բնօրինակում Իրանի Իսլամական Հանրապետության անվանման բառացի թարգմանությունն է՝ *Իրան Իսլամական Հանրապետություն* (Ջումհուրիե Էսլամիե Իրան), արաբերեն բնօրինակում Եգիպտոսի Արաբական Հանրապետությանը՝ *Եգիպտոս Արաբական Հանրապետություն* (Ալ Ջումհուրիա Միսր ալ Արաբիա), Մարոկկոյի Թագավորությանը՝ *Մարոկկոյական Թագավորություն* (Ալ Մամլաքաթ ալ Մաղրիբիա), բուլղարերեն բնօրինակում Բուլղարիայի Հանրապետությանը՝ *Բուլղարիա*

¹ *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկագրու* (կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝ Հ. Բարսեղյան), Ե., 2006, էջ 286-294:

Հանրապետություն (Ռեպուբլիկա Բըլգարիա): Այս և համանման բազմաթիվ այլ օրինակներ ցույց են տալիս, որ բնօրինակ լեզվով առաջնորդվելը միանգամայն սխալ է: Ինչ վերաբերում է անգլերենից կամ ռուսերենից «թարգմանելու» միջոցով հայերեն երկրանուններ կազմելուն, ապա դա նույնպես ակնհայտորեն սխալ է և անբնական, քանի որ այդ լեզուները երկրանունները տառադարձում են իրենց լեզվի օրինաչափություններով, որոնք կիրառելի չեն հայերենի համար: Ուստի բնական է, որ երկրանունները պետք է հայերեն տառադարձել միայն հայերենի օրենքներով:

Սակայն, ինչպես վերը նշվեց, հայերենում կիրառվում են երկու հիմքով կազմված երկրանուններ՝ սեռական հոլովի գոյականական որոշիչով և ածականական որոշիչով: Ո՞րն է դրանցից ավելի ճիշտը և հայեցին:

Անտարակույս, հայերենին առավել բնորոշ է առաջինը: Հիշենք թեկուզ ավանդական-պատմական *Հայոց աշխարհ*, *Վրաց աշխարհ*, *Ալանաց երկիր*, *Քուշանաց երկիր* և այլ ձևերը, որոնցում համապատասխանաբար առկա են *Հայք*, *Վիրք*, *Ալանք*, *Քուշանք* երկրանունների սեռական հոլովները: Ածականական որոշիչով ձևերը ցույց են տալիս նաև պետությունների կառավարման բնույթը. օրինակ՝ *Սիրիայի Արաբական Հանրապետություն* երկրանվան մեջ «արաբական» բառը ցույց է տալիս, որ այդ հանրապետությունը արաբական բնույթի հանրապետություն է, *Իրանի Իսլամական Հանրապետություն* երկրանվան մեջ «իսլամական» բառը շեշտում է երկրի հանրապետական կառավարման մեջ իսլամի ավանդույթների գերակայությունը և այլն:

Այսպիսով, երկրանունների հայերեն տառադարձման միակ ճիշտ սկզբունքը սեռական հոլովի գոյականական որոշիչով տառադարձումն է՝ *Հունաստանի Հանրապետություն*, *Աֆղանստանի Պետություն*, *Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն* և այլն¹:

Այս սկզբունքով էր ՀՀ նախագահի աշխատակազմի արձանագրային և թարգմանչական բաժնում տարիներ առաջ կազմվել և հրապարակվել «Աշխարհի երկրանունների ցանկը»²: Ողջունելի էր, որ նույն սկզբունքով էլ ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության կողմից հետագայում կազմվեց և լեզվի պետական տեսչության կողմից հաստատվեց «Երկրների անունների դասակարգիչ», որը կոչված է կարգավորելու խնդրին առնչվող երկձևություններն ու անճշտությունները³:

Ամփոփում

¹ Ա. Վարդանյան, *Երկրանունների հայերեն ճիշտ տառադարձումը*, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.05.1999:

² Կ. Կարապետյան, Ա. Վարդանյան, *Աշխարհի երկրանունների ցանկ*, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 03.09.1995:

³ *Երկրների անունների դասակարգիչ*, Հայպետստանդարտ, Հայաստանի դասակարգիչ ՀԴ 002-99, ՏԵՐԿ, 1999:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, գիտական գործունեությանը զուգահեռ, տասնամյակներ շարունակ ավանդաբար և հետևողականորեն զբաղվել է նաև մայրենի լեզվի մաքրության, կանոնարկման և հարակից հարցերով:

Հիշենք թեկուզ Հայաստանի հանրային հեռուստաընկերության հեռարձակած «Մեր լեզուն, մեր խոսքը» սիրված հաղորդաշարը, որտեղ տարիներ շարունակ մայրենիի շուրջ իրենց մտորումներն ու անհանգստություններն էին ներկայացնում ինստիտուտի առաջատար գիտաշխատողները: Այսօր էլ այդ կարևոր գործը շարունակվում է ինստիտուտի կայքում գործող «Մայրենի», «Կանոնարկում» խորագրերի ներքո հրապարակվող համանման նյութերով:

Հաշվի առնելով նաև պաշտոնական հայերենի կանոնարկման կարևորությունը՝ լեզվաբաններս պետք է շարունակենք հետևողական լինել մայրենիի հանդեպ նաև այդ ոլորտում, մեր լեզուն հարստացնենք նորանոր եզրույթներով՝ համագործակցելով համապատասխան մասնագետների հետ, նպաստենք ճիշտ, հանձնարարելի ձևերի արմատավորմանը:

Օգտագործված գրականության ցանկի ցանկ

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
2. **Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Ե., 1976:**
3. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, Ե., 2019:
4. Երկրների անունների դասակարգիչ, Հայպետստանդարտ, Հայաստանի դասակարգիչ ՀԴ 002-99, Տ69, Ե., 1999:
5. Զաքարյան Հ., Ավետիսյան Յ., Բառագիտություն, Ե., 2016:
6. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969:
7. Կարապետյան Կ., Վարդանյան Ա., Աշխարհի երկրանունների ցանկ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 03.09.1995:
8. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Ե., 1986:**
9. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու. հնչյութաբանություն, բառագիտություն, բառակազմություն, Ե. 1999:
10. Ա. Վարդանյան, Գազաթաժողով՝ թե՛ գազաթնաժողով, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.01.1997:
11. Վարդանյան Ա., Երկրանունների հայերեն ճիշտ տառադարձումը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.05.1999:
12. Վարդանյան Ա., Տառ՝ւշ, թե՛ Տավուշ, «Երկիր» օրաթերթ, 20.05.1992:
13. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝ Հ. Բարսեղյան), Ե., 2006:

ERRORS IN THE USE OF SOME TERMS IN THE OFFICIAL ARMENIAN LANGUAGE

VARDANYAN ARTAK

PhD in Philology,

Senior Researcher at the Institute of Language named after

H. Acharyan, NASRA

e-mail: artva@list.ru

In parallel with the development of the language and the emergence of new words and terms, irregular forms also appear from time to time in the modern Armenian language. The official Armenian language is also not free from such errors of word usage. Sometimes economic, diplomatic, legal and other terms are distorted or incorrectly used.

In this article, using the synchronous research method, similar errors in word usage are identified and a number of terms of the official Armenian language are regulated, including գագաթնաժողով ("summit"), տնտեսավարող սուբյեկտ ("economic entity") and other concepts; questions of correct transcription and application of the names of regions in the Republic of Armenia, as well as the names of countries of the world are clarified.

In particular, geographical names are regulated, the correct forms of which are based not only on the rules of the modern Armenian language, but also on historical traditions and generally accepted principles of transcription of proper names.

Considering the importance of regulating the terms of the official Armenian language, the attention of linguists is drawn to the tasks of this important area. It is proposed to continue to be consistent in relation to the native language in the sphere of the official Armenian language, to enrich the official Armenian with the latest terms, to promote the rooting of precise, generally recognized forms, as well as the exclusion of erroneous, distorted forms, in cooperation with relevant specialists – economists, political scientists, diplomats, lawyers, etc.

Keywords: *modern Armenian language, official Armenian language, term, word usage, toponym, country name, summit, economic entity.*

ОБ ОШИБКАХ В УПОТРЕБЛЕНИИ НЕКОТОРЫХ ТЕРМИНОВ ОФИЦИАЛЬНОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАРДАНИЯН АРТАК

Кандидат филологических наук

Старший научный сотрудник Института языка имени Р. Ачаряна НАН РА

электронная почта: artva@list.ru

Параллельно с развитием языка, появлением новых слов и терминов, в современном армянском языке время от времени появляются также и неправильные формы. От подобных ошибок словоупотребления также не свободен официальный армянский язык. Иногда искажаются или неверно употребляются экономические, дипломатические, юридические и другие термины.

В настоящей статье с использованием синхронного метода исследования выявляются подобные ошибки в словоупотреблении, регламентируется ряд терминов официального армянского языка, в том числе զազաթնիաժողով ("саммит"), տնտեսաշարքի տնթելու ("хозяйствующий субъект") и другие понятия, уточняются вопросы правильной транскрипции и применения названий областей Республики Армения, названий стран мира.

В частности, регламентируются географические названия, в основе правильных форм которых учитываются не только правила современного армянского языка, но и исторические традиции, общепринятые принципы транскрипции собственных имен.

Учитывая важность регламентации терминов официального армянского языка, внимание лингвистов сосредотачивается на задачах этой значимой области. Предлагается сохранять последовательность в отношении родного языка в рамках официальной сферы, обогащать армянский язык современными терминами, содействовать закреплению точных и общепринятых форм, а также исключать ошибочные и искажённые варианты. Для достижения этих целей важно наладить сотрудничество с соответствующими специалистами — экономистами, политологами, дипломатами, юристами и другими профессионалами.

Ключевые слова: *современный армянский язык, официальный армянский язык, термин, словоупотребление, топоним, название страны, саммит, хозяйствующий субъект.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 28.09.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: